

## ԽԵԹԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ԶՈՒԳԱՀԵՌ

ԶՈՆ Ա. Ս. ԳՐԵՊԻՆ (Ֆլորիդա, ԱՄՆ)

Հունարեն *ἄγω*-ն («առաջնորդել») և *ἄγρω*-ը («ակոս») երկար ժամանակ դիտվել են որպես միևնույն հնդեվրոպական արմատի աարբեր աստիճաններ՝ համապատասխանաբար \*Aeg'- և \*Aog'- (հմմտ. Թեոկրիտի 10,2՝ *ἄγρῳ ἀγείν* *ἄγρῳ* «ուղիղ ակոս քաշել»)։ Առաջարկվել են նման ածանցյալներ, ինչպես հուն. *ἀγέλη* «հոտ» և լատ. *agolum* «հովվի դավադան»։

Բենվենիստը<sup>1</sup> փորձել է հուն. *ἄγρω*-ը հնդեվր. \*A<sup>e</sup>/og'- արմատից անջատել՝ առնչելով խեթ. *akkala*-ին<sup>2</sup> («ակոս»), հուն. *ἄγρω*-ին (ետադարձ առնմանություն *ἄγρω*-ից), լատ. *occā*-ին<sup>3</sup> («տափան»), լիտվ. *akėti*-ին<sup>4</sup>, հնդեվր. \*ok-: Պարզվում է, որ հուն. *ἄγω*-ի և *ἄγρω*-ի բազմիցս նշված ցեղակցությունը այլևս հավաստի չէ։

Հայերենի ակաւս-ը (ակոս) կարելի է լրիվ ներգրավել այս զուգաբանություն մեջ<sup>5</sup>։ Այն հին բառույթ է, որը առաջին անգամ օգտագործվել է ավետարանում՝ Յոհ., 31, 38.

... և եթէ ակաւսք սորա լացին առ հասարակ։

Բառույթը շարունակել է իր գործածությունը և ժամանակակից հայերենում։

Թեև սույսսելի է հնգեվր. \*k-ի անցումը հայերեն f-ի, սակայն կան շատ դեպքեր, որտեղ նման տեղաշարժ չի արձանագրված։ Զահուկյանը<sup>6</sup> մեջբե-

<sup>1</sup> Hittite et indo-européen, Paris, 19 2, էջ 107—108. «Խեթերենի *akkala*-ն («ակոս») այն հազվագյուտ գյուղատնտեսական տերմիններից է, որը պահպանել է իր իմաստը։ Այդ տերմինի հնդեվրոպական ծագումը կարող ենք հաստատել՝ *ἄγρω* «ակոս»։

<sup>2</sup> -la- վերջածանցը ամենայն հավանականությամբ գոյականակերտ մասնիկ է՝ խեթ. *irmala*- («հիվանդ»)՝ *irman*-ից՝ («հիվանդություն»), խեթ. *iššali*- («թուր»)՝ *issas*-ից՝ («բերան»), տե՛ս E. Sturtevant, A Comparative Grammar of the Hittite Language, revised edition, New Haven, 1951, էջ 79 և H. Kronasser, Etymologie der Hethitischen Sprache, Band 1, Wiesbaden, 1966, էջ 322—326.

<sup>3</sup> Լատ. *occā*-ն վիճելի վերջածանց ունի։ Թվում է թե Հիրտը լավադույն լուծումն է առաջարկել. ըստ նրա (LF, 37, 1917 „Zu den lepontischen und den thrakischen Inschriften“, էջ 209—236, մասնավորապես 230) սկզբնական հնդեվր. \*okwetā-ի դրափոխություն հետևանքով առաջացել է լատինական \*otekwā-ն։ Հնչակորուստից հետո այն դարձել է \*otcā և վերջապես՝ *occā*։ Հմմտ. հին պրուսերենի *akeies*-ը («տափան»), որը զուգահեռն է նախալատինական \*okweta-ի։

<sup>4</sup> Լիտվական *akėti*-ն աչնիւր շատ հանդես է գալիս *ekėti* ձևով։ Բառասկզբի e-ն ձայնավորային ներդաշնակության արդյունք է։ Մի այլ օրինակ է լիտվերենի *eĩžilas*-ը («հովատակ») (հմմտ. հուն. *ἄγρῳ* «ամորձիք», հայ. *ամորձիք*)՝ ենթադրաբար նախնական \*arži-las--ից՝ o- աստիճանով, ինչպես հայերենում և հունարենում է։ Հմմտ. նույնպես լիտվ. *arzius* («վավաշուտ»), որտեղ ևս հանդես է գալիս o- աստիճանը։

<sup>5</sup> Գ. Զահուկյանը («Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները», Երևան, 1970, էջ 160) հայերենի ակաւս-ը առնչում է խեթերենի *akkuša*-ին («ծուղակ»)։

<sup>6</sup> Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, էջ 137։ Պետք է բնորոշել նաև, որ հայերենի ակաւս-ը կարող է պարզապես խեթերենից փոխառություն լինել և ոչ թե հնդեվր. նախաձևի անմիջական արտացոլումը։ Այս ուղղությամբ ախտատանք է կատարել Ն. Մկրտչյանը, որը հանդես է եկել ՊԲՀ-ում, 1969, № 1, էջ 238—

րում է բաղմամբիվ օրինակներ, որտեղ հնդեվր. \*k-ն շարունակվել է հայերենում որպես կ: Խեհ նման վարդապետը դժվար է ապացուցել հնչույթաբանական հիմունքներով, այնուամենայնիվ փաստը անժխտելի է մնում: Ուստի նախնական հնդեվրոպական \*ok-ը կարող է շարունակվել հայերենում որպես ակ- (եբբ \*o-ն կանոնավոր կերպով անցնում է ա-ի): Զուգահեռների համար հմտ. անուն և հուն. ὄκος, հայ. ակն «աչք» և լատ. oculus «աչք»:

Ավելի դժվար է բացատրել -աւս վերջածանցը: Մական հավանորեն այն իր ծագումը կարող է ստացած լինել, հնչույթաբանական առումով, հնդեվր. \*-to- և \*-k'o վերջածանցներից: \*-to վերջածանցը ընդհանուր է բոլոր հնդեվրոպական լեզուներին<sup>7</sup>: նվազ հաճախակի է հնդեվր. \*-k'o-ն, սակայն այն հանդես է գալիս սանսկր. romaśa-ում («մազոտ»՝ roman «մազ») և yuvaśā-ում («երիտասարդություն»՝ yuvan «երիտասարդ»)<sup>8</sup>: Թվում է թե հնդեվր. \*-ko-ն գոյականը բնորոշող նշանակություն ունի: Ուստի հայերեն ակաւս-ի նախածնը հավանաբար \*ok-o-to-k'os<sup>9</sup>-ն է:

Հնդեվր. \*-t-ն \*o-ի շրջապատում կանոնավոր ձևով անցնում է հայերեն -ւ-ի: Այս տեղաշարժը կարելի է տեսնել հայերենի հաւր ձևում՝ հնդեվր. \*pAtros-ից և հայերենի մաւր ձևում՝ հնդեվր. \*meAtros-ից<sup>10</sup>: \*-t-ն անցմանը զուգահեռ քմային \*-k'-ն անցնում է հայ. u-ի, ուստի \*-tok'os-ը դառնում է նախահաւ. wosos: Այսպիսով հնդեվր. \*ok-o-to-k'os-ը անցնում է նախահաւ. \*okowosos-ին: Հնչանկումով առաջանում է \*okowsos ձևը: \*-ows- կապակցությունը անցնում է աւս-ի, ինչպես արաւբ. բառում՝ նախահաւ. arowr՝ հնդեվր. \*Arottron-ից: Ի վերջո տեղի է ունենում վերջին վանկի անկում և նախնական \*o-ի կանոնավոր անցում w-ի: Ուստի հետևյալ կաղապարն է ստացվում՝ հնդեվր. \*okotok'os > \*okowosos > \*okawsos > \*akawsos > ակաւս: Խեհ տեղաշարժը բարդ է, բայց և այնպես հայերենում ունի իր զուգահեռները:

Հետևաբար թվում է, որ հայ. ակաւս-ը կարող է նույն արմատից սերած լինել, ինչ խեթ. akkala-ն («ակոս»), հուն. ὄκος-ը («ակոս») և ալյն:

246 և 429-ում, 1970, № 7, էջ 58—69: Սական եթև այս բառույթը խեթերենից փոխառություն լինելը, դժվար կլինե՛ր բացատրել նրա վերջածանցը:

<sup>7</sup> Հունարենում և լատիներենում \*-to-ի ունեցած ֆունկցիայի համար, բացի կրավորական հարակատար դերից, կաղմելուց, տե՛ս C. D. Buck, A Comparative Grammar of Greek and Latin, Chicago, 1933, էջ 335: Պարտադիր չէ, որ \*-to- վերջածանցը բոլոր դեպքերում բայածանցական լինի: Հմտ. լատ. hortus «պարտեզ»:

<sup>8</sup> Տե՛ս W. Whitney, A Sanskrit Grammar, Cambridge (Mass.), 1889 (1964), էջ 471:

<sup>9</sup> Լատինական -ticus վերջածանցը (հմտ. լատ. domesticus «ընտանի»՝ domus-ից «տուն» և լատ. rusticus «գեղջկական»՝ rus-ից «գյուղ») հավանաբար \*-tok'os-ից չի ծագում: Հունական -τικός-ը (հմտ. հուն. φρενιτικός «ուղեղի բորբոքում»՝ հուն. φρέν-ից «կրծքավանդակի օրգաններ, սիրտ, միտք») ցույց է տալիս, որ լատ. -ticus-ը չի կարող առաջացած լինել հնդեվր. \*-tek'os-ից, եթե նկատի առնենք հունարենի ձայնավորային համակարգի պահպանողականությունը: Մանրամասնությունների համար տե՛ս Fraenkel KZ, 45, 1913, «Beiträge zur Geschichte der Adjektiva auf. -τικός», էջ 205—224:

<sup>10</sup> O. Szemerényi-ն, Studies in the Indo-European System of Numerals, Heidelberg, 1960, էջ 19—21, այն միտքն է հայանում, որ -o-ի շրջապատը վճռական է այս տեղաշարժի համար: Այս տեսակետը ապացուցելու համար նա բխեցնում է հայ. չորս-ը հնդեվր. \*kwetwores-ից հետևյալ եղանակով՝ -w-ն անհետանում է տարնմանության հետևանքով՝ տալով \*kwetores: Այսուհի -t-ն փոխակերպվում է \*w-ի, որը հետագայում անհետանում է \*ewo-ի (և \*ewa-ի) շրջապատում. հմտ. հայ. նոր՝ հնդեվր. \*newares-ից և հուն. νε- (Favos): Ուստի հնդեվր. \*kwetwores > \*kwetores > \*kwewores > \*č'ores > հայ. չորս «չորս»: